



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	1
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	4
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ.....	6
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ	8
ԱՄՓՈՓՈՒՄ	9

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2019 թվականի առաջին կիսամյակի տնտեսական տվյալները վկայում են, որ տնտեսության զարգացումը շարունակում է ընթանալ նախորդ տարվա համեմատ ավելի դանդաղ տեմպերով: 2019թ. առաջին կիսամյակում ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 6.8 տոկոս, որին առավելապես նպաստել է ծառայությունների ոլորտը՝ 5.4 տոկոսային կետով: Աճին նպաստել են նաև արդյունաբերության աճը՝ 1.1 տոկոսային կետով և շինարարության աճը՝ 0.2 տոկոսային կետով: Գյուղատնտեսության ոլորտը կրճատվել է 6.9 տոկոսով՝ 0.6 տոկոսային կետով բացասաբար նպաստելով ՀՆԱ-ի աճին: Նշենք, որ 2018 թվականի առաջին կիսամյակի ՀՆԱ-ի 8.7 տոկոս իրական աճին 5.3 տոկոսային կետով նպաստել է ծառայությունների աճը, 1.8 տոկոսային կետով՝ արդյունաբերության աճը, իսկ շինարարության և գյուղատնտեսության ոլորտներից յուրաքանչյուրը նպաստել է 0.4 տոկոսային կետով:

Պահանջարկի տեսանկյունից՝ 2018թ. առաջին կիսամյակում 8.7 տոկոս տնտեսական աճին 10.5 տոկոսային կետով նպաստել է ներդրումների աճը և 6.5 տոկոսային կետով սպառման աճը (զուտ արտահանման նպաստումը եղել է բացասական՝ կազմելով -9.4 տոկոսային կետ): Մինչդեռ 2019թ. առաջին կիսամյակում տնտեսական աճը պայմանավորված է եղել միայն սպառման աճով (նպաստումը՝ 10.5 տոկոսային կետ), իսկ ներդրումները և զուտ արտահանումը ունեցել են բացասական նպաստում (համապատասխանաբար -4.3 և -0.3 տոկոսային կետ):

2019թ. առաջին կիսամյակում արդյունաբերությունն աճել է 5.2 տոկոսով, իսկ 2018թ. առաջին կիսամյակում՝ 8.9 տոկոսով: Արդյունաբերության աճին 2019թ. առաջին կիսամյակում հիմնականում նպաստել է մշակող արդյունաբերությունը՝ 4.3 տոկոսային կետով (աճը՝ 7.4 տոկոս): Արդյունաբերության աճին դրական է նպաստել նաև հանքագործական արդյունաբերությունը՝ 1.1 տոկոսային կետով (աճը՝ 6.2 տոկոս), մետաղական հանքաքարի արդյունահանման 7.1 տոկոս աճի շնորհիվ՝ պայմանավորված մետաղական հանքաքարի նկատմամբ արտաքին պահանջարկի աճով: Մշակող արդյունաբերության աճին էական դրական նպաստում են ունեցել ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը՝ 2.5 տոկոսային կետով (աճը՝ 16.7 տոկոս), սննդամթերքի արտադրությունը՝ 2.2 տոկոսային կետով (աճը՝ 7.8 տոկոս), ինչպես նաև այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը՝ 1.8 տոկոսային կետով (աճը՝ 37 տոկոս)՝ պայմանավորված հիմնականում ներքին պահանջարկով:

2018թ. առաջին կիսամյակում արդյունաբերության աճին նույնպես ամենամեծ նպաստումն ունեցել է մշակող արդյունաբերությունը՝ 6.0 տոկոսային կետով, իսկ հանքագործական արդյունաբերության նպաստումը եղել է 1.5 տոկոսային կետ:

2019 թվականի առաջին կիսամյակում շինարարության ճյուղի տարեսկզբից արձանագրած աճի բարձր տեմպը աստիճանաբար դանդաղել է: 2018թ. առաջին կիսամյակում շինարարության աճը եղել է 13.5 տոկոս, որին նպաստել է տրանսպորտի (5.2 տոկոսային կետով), գյուղատնտեսության (3.5 տոկոսային կետով) և էլեկտրաէներգիայի արտադրության (2.6 տոկոսային կետով) ոլորտներում իրականացված շինարարության աճը:

2019 թվականի առաջին կիսամյակում ճյուղում գրանցվել է 4.7 տոկոս աճ, որին 4.1 տոկոսային կետով նպաստել է բնակչության միջոցներով իրականացված շինարարությունը (աճը՝ 16.6 տոկոս): Շինարարությանը 1.7 տոկոսային կետով նպաստել է նաև կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարությունը (աճը՝ 3.5 տոկոս): Ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ շինարարությանը նպաստել են հիմնականում «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաճյուղը՝ 6.3 տոկոսային կետով (աճը՝ 52.6 տոկոս) և անշարժ գույքի հետ կապված գործունեությունը՝ 5.7 տոկոսային կետով (աճը՝ 21.1 տոկոս): «Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգում» (աճը՝ 44.7 տոկոս), «կացության և հանրային սննդի կազմակերպում» (աճը՝ 22.5 տոկոս) և «մշակող արդյունաբերություն» (աճը՝ 39.4 տոկոս) ենթաճյուղերը նույնպես դրական են նպաստել շինարարության աճին (համապատասխանաբար 1.5, 1.3, և 1.2 տոկոսային կետերով): Շինարարության աճն ուղեկցվել է շինարարության ոլորտում վարկավորման ծավալների զգալի աճով: Շինարարության աճի վրա բացասաբար է ազդել համայնքների, պետական բյուջեի, ինչպես նաև մարդասիրական օգնության միջոցներով իրականացված շինարարության ծավալների նվազումը (նպաստումները՝ համապատասխանաբար 0.6, 0.3 և 0.2 տոկոսային կետեր, նվազումները՝ համապատասխանաբար 46.9, 1.1 և 16.8 տոկոսներով): Շինարարության աճի վրա հիմնականում բացասաբար են ազդել նաև կրթության ենթաճյուղը՝ 3.6 տոկոսային կետով (նվազումը՝ 63.5 տոկոս), տրանսպորտի ենթաճյուղը՝ 2.3 տոկոսային կետով (նվազումը՝ 16.2 տոկոս), ինչպես նաև հանքագործական արդյունաբերությունը և բացհանքերի շահագործումը՝ 2.1 տոկոսային կետով (նվազումը՝ 54.9 տոկոս):

2019 թվականի առաջին կիսամյակում ծառայություններն աճել են 15.3 տոկոսով, ինչին հիմնականում նպաստել են մշակույթի, զվարճությունների և հանգստի ենթաճյուղը՝ 6.3 տոկոսային կետով (աճը՝ 30.1 տոկոս), ֆինանսական և ապահովագրական գործունեությունը՝ 3.5 տոկոսային կետով (աճը՝ 15.9 տոկոս),

կացության և հանրային սննդի կազմակերպումը՝ 2.4 տոկոսային կետով (աճը՝ 33.8 տոկոս): Առևտրի և ծառայությունների աճի հիմնական գործոններն են եղել վարկավորման ծավալների բարձր աճը:

2018թ. առաջին կիսամյակում ծառայությունների ոլորտում գրանցված 18.1 տոկոս աճը ևս հիմնականում պայմանավորված էր «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» (նպաստումը՝ 6.2 տոկոսային կետ) և «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ենթաճյուղերի աճով (նպաստումը՝ 4.0 տոկոսային կետ):

2019 թվականի հունվար-հունիս ամիսներին պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 6.4 տոկոսով՝ կազմելով 64,579 մարդ:

2019 թվականի առաջին կիսամյակում արձանագրվել է արտահանման անկում՝ հիմնականում պայմանավորված գործընկեր երկրներում պահանջարկի դանդաղմամբ, մետաղների միջազգային գների նվազմամբ և իրական արդյունավետ փոխարժեքի արժևորմամբ՝ պայմանավորված տնտեսության մրցունակության անկմամբ: Արտահանումը նվազել է 0.5 տոկոսով, ինչին նպաստել են հիմնականում «հանքահումքային արտադրանք» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», ինչպես նաև «մանածագործական իրեր» ապրանքախմբերը (համապատասխանաբար՝ 2.8, 2.2 և 1.4 տոկոսային կետերով)¹: Արտահանմանը դրական են նպաստել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «պատրաստի սննդի արտադրանք» և «սարքեր և ապարատներ» ապրանքախմբերը (համապատասխանաբար՝ 4.3, 1.2 և 1.0 տոկոսային կետերով):

2019թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է 0.5 տոկոս ներմուծման աճ, ինչին հիմնականում նպաստել են «տրանսպորտային միջոցներ» և «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերը (համապատասխանաբար՝ 2.1 և 1.6 տոկոսային կետերով)²:

2019 թվականի առաջին կիսամյակում ՀՀ սպառողական շուկայում ցածր գնաճային միջավայրը պահպանվել է: 12-ամսյա գնաճը տարեսկզբի նկատմամբ 2019թ. առաջին կիսամյակում արագացել է և կազմել 2.5 տոկոս՝ գտնվելով ԿԲ

¹ Հուլիս ամսին արտահանման ցուցանիշը վերանայվել է, որի արդյունքում հունվար-հունիս ամիսների արտահանման ցուցանիշը դարձել է դրական՝ -0.5% ից դառնալով 0.2%:

² Հուլիս ամսին ներմուծման ցուցանիշը վերանայվել է, որի արդյունքում հունվար-հունիս ամիսների ներմուծման աճը 0.5% ից դարձել է 0.4%:

թիրախային միջակայքի (ԿԲ-ի՝ գնաճի թիրախը 4.0 տոկոսն է՝ ± 1.5 տոկոսային կետ թույլատրելի միջակայքով) ստորին հատվածում:

2019 թվականի առաջին կիսամյակում հարկաբյուջետային քաղաքականության զսպող ուղղությունը պահպանվել է՝ ունենալով 2.9 զսպող հարկաբյուջետային ազդեցություն՝ պայմանավորված և՛ եկամուտների (-1.9), և՛ ծախսերի (-1.0) զսպող ազդեցություններով:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՆՆԵՐԸ

2019 թվականի առաջին կիսամյակի արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 758.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 25.1 տոկոսով, որից հարկերը և տուրքերը կազմել են 713.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 24.5 տոկոսով: Հարկային եկամուտների և պետական տուրքերի հաշվին է ապահովվել ՀՀ պետական բյուջեի եկամուտների 94.1 տոկոսը: Հարկերի և տուրքերի աճը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի՝ 35.5 տոկոս, եկամտային հարկի՝ 38.5 տոկոս և շահութահարկի՝ 69.8 տոկոս աճերով³:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին օրենքով առաջին կիսամյակի համար նախատեսվել էր շուրջ 691.1 մլրդ դրամ բյուջետային եկամուտների մուտք, սակայն փաստացի ցուցանիշը 6.6 տոկոսով գերազանցել է կիսամյակային ծրագրով նախատեսված ճշտված ցուցանիշը (711.4 մլրդ դրամ) և կազմել է 758.5 մլրդ դրամ: Նշված գումարից 751.8 մլրդ դրամը կազմել են ներքին աղբյուրներից ստացված եկամուտները՝ ապահովելով կիսամյակային ծրագրի 108.4 տոկոսը, 6.7 մլրդ դրամը ստացվել է պաշտոնական դրամաշնորհների տեսքով, որոնք 62.6 տոկոսով զիջել են առաջին կիսամյակի ծրագրված ցուցանիշը: Հարկային եկամուտները (ներառյալ՝ պետական տուրքերը) և այլ եկամուտները 8.4-ական տոկոսով գերազանցել են կիսամյակային ծրագիրը: Արդյունքում 2019թ. առաջին կիսամյակում հարկային եկամուտները և պետական տուրքերը 55.3 մլրդ դրամով, իսկ այլ եկամուտները՝ 3 մլրդ դրամով գերազանցել են ճշտված պլանի ցուցանիշները: Ի դեպ, պետական բյուջեի հարկային եկամուտների ավելացումը որոշ չափով պայմանավորված է 2019 թվականի հունվարի 1-ից ակցիզային հարկով հարկվող մի շարք ապրանքների ակցիզային հարկի դրույքաչափերի բարձրացմամբ:

³ Նշենք, որ 2019թ. և 2018թ. հարկային եկամուտներն ըստ հարկատեսակների միմյանց հետ համադրելի չեն, քանի որ պարունակում են անցումային գերավճարների մարումները: Այդ պատճառով, յուրաքանչյուր հարկատեսակի նպաստումը չի ներկայացվել:

ՀՀ պետական բյուջե մուտքագրված պաշտոնական դրամաշնորհները թեև 1.8 անգամ կամ 2.9 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը, սակայն 62.6 տոկոսով զիջել են առաջին կիսամյակի ծրագրված ցուցանիշը: Նշված թերակատարումը հիմնականում պայմանավորված է նպատակային ծրագրերի կատարման ցածր մակարդակով: Ընդ որում, միայն 6 ծրագրերի շրջանակներում չեն ստացվել նախատեսված 5 մլրդ դրամ դրամաշնորհները: Իրականում, այս թերակատարման պատճառը կառավարության «ոչ բավարար լրջությամբ և կարևորությամբ» դրսևորած վերաբերմունքն է կապիտալ ծախսերի նկատմամբ: Կառավարության վարքագծում կա մտավախություն, որ իրականացվող ծրագրերն արդյունավետ չեն, և պարունակում են կոռուպցիոն ռիսկեր, այդ պատճառով դրանք չեն իրականացվում կամ թերի են իրականացվում՝ արդյունքում վատթարացնելով հարաբերությունները դոնորների հետ:

2019թ. առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 38.4 մլրդ դրամ, որը 8.4 տոկոսով գերազանցել է առաջին կիսամյակի ծրագրային ճշտված ցուցանիշը և 28.9 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փաստացի ցուցանիշը: Կատարողականի բարձր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսավճարների, ինչպես նաև օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների կիսամյակային ծրագրի գերազանցմամբ:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները 2019թ. առաջին կիսամյակում, մլրդ դրամ

	Առաջին կիսամյակի պլան ⁴	Առաջին կիսամյակի ճշտված պլան ⁵	Փաստ	Կատարման %-ը ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	691.1	711.4	758.5	106.6%
այդ թվում՝				
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	645.5	658.1	713.4	108.4%
Պաշտոնական դրամաշնորհներ	17.8	17.9	6.7	37.4%
Այլ եկամուտներ	27.8	35.4	38.4	108.4%

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2019 թվականի առաջին կիսամյակի արդյունքներով պետական բյուջեի ծախսերը կազմել են 636.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 4.3 տոկոսով: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են 613.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 5.9 տոկոսով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները (կապիտալ ծախսերը) կազմել են 23.6 մլրդ դրամ, որտեղ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 23.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 32.2 տոկոսով:

⁴ Հաստատվել է ՀՀ կառավարության 27.12.2018թ. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշմամբ: (Ցուցանիշները ներկայացված են առանց նշված որոշման վերաբաշխման հավելվածի:)

⁵ Հաշվի են առնված հաշվետու ժամանակաշրջանում օրենսդրության համաձայն կատարված փոփոխությունները:

Աղյուսակ 2. Պետական բյուջեի ծախսերը (տնտեսագիտական դասակարգմամբ) 2019թ. առաջին կիսամյակում, մլրդ դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Առաջին կիսամյակի պլան ⁶	Առաջին կիսամյակի ճշտված պլան ⁷	Փաստ	Կատարման %-ը առաջին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	769.5	798.0	636.6	79.8%
այդ թվում՝	-	-	-	
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	680.1	699.1	613.1	87.7%
այդ թվում՝	-	-	-	
Աշխատանքի վարձատրություն	76.4	78.4	72.3	92.2%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	92.6	97.0	61.8	63.7%
Տոկոսավճարներ	76.8	76.8	73.1	95.1%
Սուբսիդիաներ	50.5	51.6	49.9	96.7%
Դրամաշնորհներ	59.0	64.5	57.7	89.4%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	221.4	228.6	218.0	95.4%
Այլ ծախսեր	103.4	102.3	80.4	78.7%
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (կապիտալ ծախսեր)	89.3	98.9	23.6	23.8%
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	89.4	98.9	23.8	24.0%
Հիմնական միջոցներ	89.4	98.9	23.8	24.0%
Շենքեր և շինություններ	61.7	70.7	21.7	30.7%
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	26.2	26.5	1.7	6.5%
Այլ հիմնական միջոցներ	1.5	1.7	0.4	21.8%
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	-	-	-0.2	

Պետական բյուջեն ծախսերի մասով ընթացիկ տարվա առաջին կիսամյակում թերակատարվել է: Ընդհանուր ծախսերը ճշտված ծրագրով նախատեսված 798.0

⁶ Հաստատվել է ՀՀ կառավարության 27.12.2018թ. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշմամբ: (Ցուցանիշները ներկայացված են առանց նշված որոշման վերաբաշխման հավելվածի:)

⁷ Հաշվի են առնված հաշվետու ժամանակաշրջանում օրենսդրության համաձայն կատարված փոփոխությունները:

մլրդ դրամի փոխարեն կազմել են 636.6 մլրդ դրամ՝ թերակատարվելով 161.4 մլրդ դրամով (20.2 տոկոսով):

Ընթացիկ ծախսերը թերակատարվել են 86.0 մլրդ դրամով (12.3 տոկոսով): Սակայն, ավելի խնդրահարույց է կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների) թերակատարումը: Վերջինս, ըստ ճշտված պլանի, նախատեսվել է 98.9 մլրդ դրամ, սակայն իրականացվել են ընդամենը 23.5 մլրդ դրամի ծախսերը (թերակատարումը կազմել է 76.2 տոկոս): Կապիտալ ծախսերի թերակատարումը պայմանավորված է ինչպես վերը նշված այն մտավախությամբ, որ իրականացվող կապիտալ ծրագրերը արդյունավետ չեն, և պարունակում են կոռուպցիոն ռիսկեր, այնպես էլ կառավարության կառուցվածքի օպտիմալացման հետևանքով ԾԻԳ-երի փակման և դրանց կառուցվածքային ստորաբաժանման կարգավիճակ տալու բարեփոխումների գործընթացի հետ: Վերջինս, անորոշության մեջ դնելով ծրագրերի իրականացնողներին, հնարավորություն չի տալիս ապահովել աշխատանքների կատարողական և ստանալ ֆինանսավորում: Այսպիսով, կառավարության խիստ զգուշավոր քաղաքականության վարման արդյունքում կապիտալ ծախսերը թերակատարվում են, դրամաշնորհները և վարկային միջոցները չեն ստացվում, և շարունակում է վատթարանալ երկրի վարկանիշը դոնորների շրջանում:

Կապիտալ ծախսերի թերակատարումը խիստ բացասաբար կարող է անդրադառնալ երկարաժամկետ տնտեսական աճի վրա՝ հանգեցնելով ՀՆԱ-ի պոտենցիալ մակարդակի նվազմանը⁸: Այսինքն, կառավարության վարած քաղաքականությունը պետք է միտված լինի ոչ թե կապիտալ ծախսերի նվազեցմանը, այլ անարդյունավետ ծախսերի շրջանակում առաջացող ռիսկերի զսպմանը:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴ

2019թ. առաջին կիսամյակում պետական բյուջեն եղել է հավելուրդային՝ կազմելով 121.9 մլրդ դրամ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ձևավորվել էր պետական բյուջեի պակասուրդ 3.9 մլրդ դրամի չափով:

⁸ Մանրամասն տե՛ս «ՀՀ պետական բյուջեի կապիտալ ծախսերի թերակատարումը և դրա հնարավոր հետևանքները» վերլուծական աշխատանքը:

Աղյուսակ 3. Պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները 2019թ. առաջին կիսամյակում, մլրդ դրամ

	Առաջին կիսամյակի պլան ⁹	Առաջին կիսամյակի ճշտված պլան ¹⁰	Փաստ	Կատարման %-ը Առաջին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	691.1	711.4	758.5	106.6%
ԾԱԽՍԵՐ	769.5	798.0	636.6	79.8%
ԴԵՖԻՑԻՏ (ՊԱԿԱՍՈՒՐԴ)	78.4	86.6	-121.9	-140.8%

Հատկանշական է, որ 2019թ. առաջին կիսամյակում ծրագրված դեֆիցիտի փոխարեն ձևավորվել է հավելուրդ: Բյուջեի հավելուրդը հիմնականում պայմանավորված է եկամուտների համեմատ ծախսերի ավելի ցածր կատարողականով: Փաստորեն, բյուջեի սխալ պլանավորման արդյունքում փոխվել է հարկաբյուջետային քաղաքականության ուղղությունը՝ ծրագրված չեզոքից դառնալով զսպող: Սա բացասական երևույթ է, քանի որ պլանավորված հարկաբյուջետային քաղաքականությունը միտված է արդյունավետորեն կարգավորելու ամբողջական պահանջարկը՝ խթանելով տնտեսությունն անկման փուլում և զսպելով՝ աճի փուլում: Սակայն, ստացվում է, որ կառավարությունը զսպում է տնտեսությունն այն պայմաններում, երբ տնտեսական աճը և տնտեսության կարևոր գերակա ճյուղերի աճերը դանդաղում են: Նման քաղաքականությունը կհանգեցնի աճի ավելի դանդաղմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

2019 թվականի առաջին կիսամյակի ընթացքում արձանագրվել է ՀՀ տնտեսական ակտիվության դանդաղում: ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 6.8 տոկոս, որին ամենամեծ նպաստումը ունեցել է ծառայությունների ոլորտը՝ 5.4 տոկոսային կետով: Աճին նպաստել են նաև արդյունաբերության աճը՝ 1.1 տոկոսային կետով և շինարարության աճը՝ 0.2 տոկոսային կետով: Գյուղատնտեսության ոլորտը կրճատվել է 6.9 տոկոսով՝ ունենալով 0.6 տոկոսային կետով բացասական նպաստում ՀՆԱ-ի աճին: Նշենք, որ 2018 թվականի առաջին կիսամյակի ՀՆԱ-ի 8.7 տոկոս իրական աճին 5.3 տոկոսային կետով նպաստել է ծառայությունների աճը, 1.8 տոկոսային կետով՝ արդյունաբերության աճը, իսկ

⁹ Հաստատվել է ՀՀ կառավարության 27.12.2018թ. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշմամբ: (Ցուցանիշները ներկայացված են առանց նշված որոշման վերաբաշխման հավելվածի:)

¹⁰ Հաշվի են առնված հաշվետու ժամանակաշրջանում օրենսդրության համաձայն կատարված փոփոխությունները:

շինարարության և գյուղատնտեսության ոլորտներից յուրաքանչյուրը՝ 0.4 տոկոսային կետով:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին օրենքով առաջին կիսամյակի համար նախատեսվել էր շուրջ 691.1 մլրդ դրամ բյուջետային եկամուտների մուտք, սակայն փաստացի ցուցանիշը 6.6 տոկոսով գերազանցել է կիսամյակային ծրագրով նախատեսված ճշտված ցուցանիշը (711.4 մլրդ դրամ) և կազմել է 758.5 մլրդ դրամ: 2019թ. առաջին կիսամյակում հարկային եկամուտները և պետական տուրքերը 55.3 մլրդ դրամով, իսկ այլ եկամուտները՝ 3 մլրդ դրամով գերազանցել են ճշտված պլանի ցուցանիշները:

Հատկանշական է, որ 2019թ. առաջին կիսամյակում նվազել են և՛ ընթացիկ, և՛ կապիտալ ծախսերը: Սակայն, հատկապես կապիտալ ծախսերի կրճատումը ինքնին բացասական երևույթ է, քանի որ կապիտալ ծախսերը միտված է մեծացնելու ամբողջ տնտեսության արտադրողականությունը՝ նպաստելով երկարաժամկետ պոտենցիալ տնտեսական աճի արագացմանը: Բացի այդ, կապիտալ ծախսերի թերակատարումը իր էական և շարունակական բացասական ազդեցությունն ունի նաև տնտեսության մյուս ճյուղերի վրա: ՀՀ-ում կապիտալ ծախսերի ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով, ինչի արդյունքում վատթարանում է նաև երկրի վարկանիշը դոնորների շրջանում:

ՀՀ պետական բյուջեի միջոցները պլանավորված ծրագրով չօգտագործելու արդյունքում 2019թ. առաջին կիսամյակում պետական բյուջեն եղել է հավելուրդային՝ կազմելով 121.9 մլրդ դրամ: Փաստացի ստացվում է, բյուջեի կատարումը զգալի շեղվել է պլանավորված քաղաքականությունից, ինչի արդյունքում հարկաբյուջետային քաղաքականությունը ծրագրված չեզոքից փոխվել է՝ դառնալով զսպող: Հաշվի առնելով, որ տնտեսական աճը և տնտեսության կարևոր գերակա ճյուղերի աճերը դանդաղում են, զսպող հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը տեղին չէ, և իրավիճակը կարող է հանգեցնել աճի ավելի դանդաղմանը:

Հարկ է նկատել նաև, որ կառավարության վարքագիծը բյուջեի նման քաղաքականության իրականացման շրջանակում նպատակ է հետապնդում նվազեցնելու ՀՀ պետական պարտքը, սակայն վարվող այս քաղաքականության արդյունքում անվանական ՀՆԱ-ի աճը դանդաղման միտումներ կարող է ցուցաբերել, ինչի արդյունքում պարտքի կայունացումը նույնպես վտանգի տակ կարող է դրվել:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: